



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՏԵԼԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵԴԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Մարտի առաջին տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 2-5 աստիճանով:



Ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում +18...+20°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +24...+26°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+19°C, Շիրակում՝ +8...+13°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +14...+16°C, Գեղարքունիքում՝ +9...+12°C (Սեմյոնովկա՝ +6°C), Լոռիում՝ +14...+17°C, Արմավիրում՝ +7...+9°C, Արարատում՝ +9...+10°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +8...+11°C, նախալեռներում՝ +14...+16°C:

Ամենացածր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում 0...-3°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -6...-8°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+1°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +2...+5°C, նախալեռնային շրջաններում՝ -2...-5°C, Շիրակում՝ -4...-9°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -4...-7°C, նախալեռնային շրջաններում՝ -2...-4°C, Գեղարքունիքում՝ -5...-10°C, Լոռիում՝ -3...-7°C, Արմավիրում, Արարատում՝ 0...-2°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -3...-8°C, նախալեռներում՝ 0...+1°C:

### Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 8-30մմ (171-199%), Լոռիում՝ 8-19մմ (79-173%), Տավուշում՝ 8-10մմ (63-97%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 1-7մմ (14-60%), նախալեռներում՝ 5մմ (74%), Գեղարքունիքում՝ 6-18մմ (80-154%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 16-23մմ (98-106%), նախալեռներում՝ 7մմ (54%), Արմավիրում՝ 1-5մմ (21-73%), Արարատում՝ 6-11մմ, (116-134%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 20մմ, նախալեռներում՝ 17մմ (140%), Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 4-5մմ (22-55%), հովտային շրջաններում՝ տեղումներ չեն դիտվել:

Հանրապետությունում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -8...-13°C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ -1...-5°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +1°C:

### Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Մարտի 10-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկի բարձրությունը Արագած բ/լ-ում կազմել է 119սմ, Ամբերդում՝ 45սմ, Անանուն լ/ք-ում՝ 16սմ, Ջերմուկում՝ 14սմ, Ապարանում, Հանքավանում՝ 13սմ, Սեյրնովկայում՝ 9սմ, Մարտունիում՝ 8սմ, Ճամբարակում, Գավառում՝ 5սմ, Սևանում՝ 4սմ, Մասրիկում՝ 3սմ, Շորժայում՝ 1սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայել է:



**Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները**

Հովրային և նախալեռնային շրջաններում սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները: Կատարվել են պողպատաբերի էր, խաղողի վազի այգեբաց, կարտոֆիլի դաշտում՝ վար:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու համար:



## Աշնանացան ցորեն

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը շարունակել է գտնվել ձմեռային հանգստի շրջանում: Եղանակային պայմանները նպաստավոր էին ձմեռման համար, աշնանացանի թփակալման հանգույցում վրանգավոր ջերմաստիճաններ չեն գրանցվել: Առանձին լեռնային շրջաններում հողը սառած էր 34-50սմ խորությամբ: Միայն Գյումրիում և Սիսիանում բազմամյա միջին ժամկետներից 20-29 օր շուրջ աշնանացան ցորենի վեգետացիան վերսկսվել է:

Հովտային և նախալեռային շրջաններում աշնանացանը գտնվել է թփակալման փուլում: Աշնանացանի բարձրությունը փասնօրյակի վերջին կազմել է 10-12սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-10սմ շերտում կազմել են 10մմ, 0-20սմ շերտում՝ 24մմ, որը բազմամյա միջին արժեքներից ցածր է 8-10մմ-ով:

## Պտղապտուներ

Պտղապտուների վեգետացիան սկսվում է, երբ օդի միջին ջերմաստիճանը հաստատուն կերպով հասնում է  $+5^{\circ}\text{C}$ , սակայն ծիրանենու կենսաբանական հանգստի խորը չի և թեթև փաքացումների դեպքում կարող է դիտվել վեգետացիայի վաղ սկսում: Արարատյան դաշտում և առանձին նախալեռնային շրջաններում վեգետացիան սկսվել է մարտի 02.03-06.03-ին: Բազմամյա միջին ժամկետներից 10-20օր շուրջ պտղապտուների բողբոջները ուռչեցին:

Սյունիքի հովտային շրջաններում դիտվել է խաղողի վազի հյութաշարժ:

